

Բ. Սուրբի տօներու. Ժա) Պետրոս եւ Պօղոս առաքեալներու Օրհնութիւն, Մանկունք ու Համբարձի, Ժբ) Որդւոցն Որոտման Օրհնութիւն, Ժգ) Կանոն Եօթանասնից, Ժդ) Մարգարէից ԴՁ. Հարց, Ժե) Յովհաննու Մկրտչի Արեգականն արդարութեան եւ ԴՁ. Հարց, Ժզ) Գրիգորի Լուսաւորչի «զնորերն», Ժէ) Հրեշտակապետացն, Ժը) Հայրապետացն, Ժթ) Թարգմանչաց Օրհնութիւնն, Ի) Մանկանցն Բեղզահմի, Իա) Ղեւոնդեանց, Իբ) Վարդանանց, Իդ) Շարական մի Անտոնի, Իզ) Երկու շարական Թէոդոսի, Իե) Շարական մի Քառասնիցն, Իզ) Յակոբայ Մծբնայ Հայրապետին Իէ) Նինուէացւոց, Իը) Այսօր անճառ եւ Նորոգող տիեզերաց, Իթ) Եւ այլ բազում շարականս:

Գ. Ժամասացութեան երգեր. Առաւօտեան ժամու (Յիշեսցուք, Առաւօտ լուսոյ, Աշխարհ ամենայն, Նորաստեղծեալ, Արարչական Ա-Ք), Ճաշու ժամու (Օրհնեմք զքեզ Ա-Ք, Նահապետին Արարչամու), Երեկոյեան ժամու (Նայեաց սիրով, Ի քէն Հայցեմք), Ննջեցելոց (Աստուած անեղ Ա-Ք):

Ձեռագիր շարակնոցները, գրեթէ ամէնքն ալ բացայայտ կերպով կը դրեն թէ ժամասացութեան երգերը կը պատկանին Ներսէս Կաթողիկոսի, մինչ նկատմամբ շարականներու չենք գտներ ամէն անգամ նոյն բացայայտ վկայութիւնը, այլ լոկ ժլատ ու անցողակի ակնարկներ, եւ անոնք ալ սակաւաթիւ ձեռագիրներու մէջ:

Շնորհալիի շարականներու հարադատութեան հարցը լուծելու համար դուցէ պէտք էինք դիմել իւրաքանչիւր շարականի ներքին կադմին, յօրինուածքին, հոգեբանութեան ու շնորհքին. բայց երբ մտածենք թէ շարականի մը շարժառիթը ու արտաքին շրջանակը ինքնին քիչ թէ շատ նոյն խորհրդածութիւնները կը ներշնչէ ամէն հեղինակի ու գրիչի, այն ատեն կը դժուարի հարցը, ու դրեթէ մարգարէական շունչ պէտք է՝ դուշակելու համար Շնորհալիի յատուկը: Եթէ նման աշխատանք մը համոզիչ ու դրական արդիւնքի հասնելու յոյսը ներշնչէր մեր արդի մատենագիրներուն, մինչեւ այսօր վաղուց այդ գործը կատարած կ'ըլլային: Ուստի կը մնայ դիմել արտաքին տուեալներու, ուղղակի ձեռագիրներու, որոնք թէեւ լիուրի չեն յատկեր մէն Հարց, բայց դոնէ որոշ կռահումներ կատարելու ճամբան ցոյց կու տան մեզի:

Այսօր եթէ մեր ձեռքը հասած ըլլային ԺԱ. դարէն կամ անկէ առաջ գրուած շարակնոցի գոնէ նմոյշ մը, ամէն Հարց պարզուած կ'ըլլար: Դժբախտաբար այս տեսակ ձեռագիր գոյութիւն չունի. հնազոյն կարծուածն իսկ տարակոյններ կը յարուցանէ թէ մի՞ դուցէ ունենայ իր մէջ Շնորհալիի այս կամ այն շարականը:

Այս վերջին տեսակին կը թուի պատկանիլ Ս. Ղազարի թիւ 97 շարակնոցը, որ արտաքին պարագաներէն դատելով ամէնէն ուշ օ-

րինակուած պէտք է ըլլայ ԺԳ. դարուն: Հաղարաւոր ձեռագիր շարակնոցներու մեծութիւնն ունի, դրուած հին թուղթի վրայ, հին բոլորգիրով, եւ բացի առաջին թուղթերէն՝ ամբողջութիւնը անթերի է. կը ներկայանայ հին կարգաւորութեամբ, որ ինքն իր տեսակին մէջ հայ ձեռագիր շարակնոցներու մէջ միակ նմոյշն է: Եզականութիւնը դեռ աւելի երեւան կ'ելլէ երբ զայն համեմատելու ըլլանք ԺԳ. դարուն խմբագրուած եւ մինչեւ մեզի հասած շարակնոցի մը հետ:

Շարակնոցներու քննութենէն որոշ կը տեսնուի թէ Շնորհալիի շարականները ոչ թէ բոլորը մէկ անգամէն, այլ կամաց կամաց, Ժամանակի ընթացքին, կարելի է ըսել խումբ առ խումբ մտած են շարակնոցէն ներս. եւ այս երեւոյթը դեռ աւելի կը դժուարացնէ հարադատութեան հարցը:

Աւելի եւս շօշափելի եւ փաստացի կերպով կարենալ խօսելու համար, հոս կը հրատարակենք ցանկը թիւ 97 ձեռագիր շարակնոցին, որու յարգը եւ կազմութեան մէջ ունեցած մեծ դերը կրնայ ըմբռնել՝ հարցովս հետաքրքրուող եւ խնդրին տեղեակ քննասէր անձը միայն:

Թուրք

- 1ա. Կանոն Աստուածայայտմութեան
24բ. Մեծացուցե՛ք Յարութեան
28ա. Կանոն Աւետեաց Աստուածածնի
28բ. Կանոն Փոխման Աստուածածնի
 օ. Այսօր Ժողովեալ սրբոց.
 Այսօր զազատիչն յանցանաց.
 Հ. Որ զնախամօրն զյանցանս.
 Ճ. Խորանայարկ կամարանման.
 ո. Որ ունիսդ իշխանութիւն.
 տ. Անսկիզբն Աստուած.
31ա. Կանոն երկրորդ աւուրմ
 օ. Այսօր զանճառելի ծննդեան.
 Լոյսն անքնին ծածկեալ.
 Հ. Որ զմիածին որդւոյ.
 Ճ. Աստուածածին ամպ լուսաւոր.
 ո. Որ անմարմին բնութեամբ.
 տ. Այսօր զուարճացան.
32բ. Կանոն երրորդ աւուրմ
 օ. Այսօր հրաշափառ.
 Այսօր զնախամօրն երկանց.
 Հ. Որ զդատակնիք երկանց.
 Ճ. Աստուածածին գերագոյն.
 ո. Որ խնարհեցար յերկնից.
 տ. Ուրախ լեր մայր անճառ.
34բ. Կանոն Տեառնըմբռնալիւ
36բ. Կանոն Ամտոնի Ամապատակամի
 օ. Որ գերազանցեալ դատար.
 Որ ի հանդէս քո ճշնութեան.

- Հ. Նախասկիզբն միանձանց.
ո. Որ անմարմնական վարուք.
տ. Որ շնորհօք սուրբ Հոգւոյն.
Ճկ. Պարծանք եկեղեցւոյ.
38ա. Կանոն քաղաւորաց
 օ. Որ գերկեալութիւն թագաւորու-
 թիւնդ.
 Որ զարդարեալ գեղապանծ
 Հ. Օրհնեմք զքեզ Քրիստոս.
 ո. Աստուած փրկիչ մեր.
 տ. Ով երանելի եւ բարեպաշտ.
 Ճկ. Ով երանելիդ ամենեցուն.
39բ. Կանոն Դաւթի եւ Յակոբայ
 օ. Յաղթող դտաւ յօրհնաբանս.
 Որ երջանիկ լուսով.
 Հ. Մեղաք յամենայնի.
 ո. Անսկիզբն Աստուած լոյս.
 տ. Երդուաւ Տէր Դաւթի.
 Ճկ. Օրհնեցէ՛ք զՏէր յօրհնութիւն.
41ա. Կանոն սրբոյն Ստեփաննայի
 օ. Նահատակ բարի Քրիստոսի.
 Որ ընտրեցար ի կոչումն.
 Առաքեալ եւ նախավկայ.
 Ճանապարհ վկայից գհետ.
 Հ. Ընդ երկնային հոգեղինացն.
 ո. Առաքեալ ի մեզ Տէր.
 տ. Ով երջանիկ ճառագայթ.
 Ճկ. Նախասարկաւադ եւ առաջին.
 Ճչ. Յնծայ այսօր եկեղեցի.

- 43բ. Կանոն Պետրոսի եւ Պօղոսի
 օ. Յեծայ այսօր եկեղեցի.
 Որ զերազոյն ընտրելոց.
 Հ. Որ խոստացար տալ.
 ո. Ամուլք հաւատոյ.
 տ. Երանելի սուրբ առաքեալք.
 մկ. Որ արքիազարչ.
 Հբ. Որ անպարագիրն.
 45բ. Կանոն Յովիմանու եւ Յակոբայ
 օ. Որ էնն յէութեան.
 Որ անմարմին ի Հօրէ.
 Հ. Որ զամենայն յոյնէ.
 ո. Որդիքն որոտման.
 տ. Հոգի իմ կանխէ.
 մկ. Որ յանստուեր ի լուսոյն.
 47ա. Կանոն Կաթողիկոս Կաթողիկոս
 օ. Երանելի սուրբ առաքեալք.
 Չորս առեալ ի ծովակէն.
 Հ. Իսկից Բանդ Հօր.
 ո. Տէր որ զգթութիւնդ.
 տ. Առաքեալք յԱստուծոյ.
 տ. Որք ի սկզբանէ պատուեալք.
 տ. Ի քէն հայցեմք.
 մկ. Աշակերտք Քրիստոսի.
 Հբ. Ժողովեալ սուրբ առաքեալք.
 Լուսաւորք երեւեցան.
 49ա. Կանոն Յակոբայ Կայրապետին
 օ. Յաղթող եւ սուրբ.
 Ուրախացան զօրք երկնից.
 Հ. Սուրբ եւ Տէր.
 ո. Երկրպագեմք առաջի.
 տ. Թաղաւոր Թաղաւորաց.
 մկ. Ամուլք հաւատոյ.
 50բ. Կանոն սրբոց Քառասնիցն
 օ. Այսօր ընդ անմարմնոցն.
 Այսօր զանյաղթելի.
 Հ. Այսօր տօնելով զյիշատակ.
 ո. Հրաշափառ ծագումն.
 տ. Այսօր ճշման դասք.
 մկ. Լուսապսակացն տօնիւս.
 53ա. Կանոն ապաշխարութեան
 76բ. Մանկունի ապաշխարութեան
 77բ. Համարման ապաշխարութեան
 78բ. Կանոն Կաթողիկոս (ԱՁ-ԴԿ)
 91բ. Կանոն յարութեան Ղազարու
 օ. Այսօր գոլով ի Բեթանիա.
 Կենդանութեանց բաշխող.
 Յաստուածային ձայնէ.
 Հ. Աստուածային գոյմամբ.

- ո. Որ ի չորեքեկեայեան.
 տ. Աղբիւր անմահութեան.
 մկ. Յիսուս միածինն.
 ճշ. Որ ի յերկնից բանդ.
 93ա. Կանոն գալստեան Տեառն
 օ. Որ վերօրհնիս.
 Այսօր զանսկիզբն.
 Հ. Որ զերիս մանկունսն.
 մ. Ուրախ լեր յոյժ.
 ո. Ուրախ լեր եկեղեցի.
 տ. ՉՔրիստոս Թաղաւորն որ.
 ճշ. Անսկիզբն բանն Հօր.
 Հբ. Այսօր ընդ հրակերպեան.
 94բ. Կանոն երկրորդ գալստեան
 օ. Թաղաւոր գոլով քո.
 Յորժամ եկն Յիսուս.
 Հ. Բարեբանեալ եւ Քրիստոս.
 մ. Ուրախ լեր մայր լուսոյ.
 ո. Չգալուստ քո Քրիստոս.
 տ. Ի յարութեան յաւուր.
 96ա. Կանոն մեծի երկուշաբթի
 օ. Անեղն ի Հօրէ.
 Եկայք որդիք մարդկան.
 Հ. Որ արարիչդ ես.
 ո. Առ ամենեսեան զթած.
 տ. Չքեզ օրհնեմք որ.
 մկ. Ալէլուիա...
 97ա. Կանոն մեծի երեքշաբթի
 օ. Իմաստուն կուսանքն.
 Յորժամ յերկնից.
 Հ. Որ սքանչելիդ ես.
 ո. Թաղաւոր փառաց.
 տ. Որ նստիս ի քրովբէս.
 մկ. Ահաւոր եւ Թաղաւոր.
 Հբ. Շնորհեա մեզ Տէր.
 98բ. Կանոն մեծի չորեքշաբթի
 օ. Որ յաթոռ փառաց.
 Որ խորհրդեամբ.
 Հ. Որ խորհրդոց ես.
 ո. Չքէն խորհեցան.
 տ. Այսօր եկեալ կամաւ.
 մկ. Նոր սքանչելիք.
 100ա. Կանոն մեծի հինգշաբթի
 օ. Վերածգողն երկնից.
 Աղբիւր լուսոյ.
 Որ ետդ ի յերկինս.
 Քրիստոս Աստուած որ.
 Որ վասն մեր.
 Յորմէ սարսեալ.

- Հ. Լոյսդ ի հայրական.
 ո. Արկողդ զլոյս.
 տ. Որ անսկիզբն յէութեանդ.
 մկ. Այսօր կանգնեցաւ.
 102բ. Կանոն մեծի ուրբաթի
 օ. Արծաթսիրութեամբ.
 Ի գիշերին յորում.
 Հ. Իջեր յերկնից.
 ո. Եկեալդ ի փրկութիւն.
 տ. Ով սքանչելի.
 մկ. Որ Թաղաւորդ ես.
 Հբ. Եկայք հաւատացեալք.
 104ա. Կանոն մեծի շաբաթի
 օ. Պարզեաւորուն ամենեցուն.
 Կենդանին յաւիտենից.
 Կուսածին մարմնով.
 Հ. Չքեզ օրհնեմք.
 ո. Որ բաշխողդ ես.
 տ. Յովսէփ ճշմարիտ.
 մկ. Յովսէփ քեզ.
 105բ. Կանոն մեծի մաշու Թիմանց
 106բ. Կանոն Յարութեան Տեառն
 137ա. Կանոն Համարման Տեառն
 139ա. Կանոն Գալստեան Հոգւոյն սրբոյ
 օ. Առաքելոյ աղաւնոյ.
 Կենդանաբար Աստուած.
 Երրորդութիւն անբաժանելի.
 Հ. Չչորհուն զգալուստն.
 մ. Այսօր նոր ժողովուրդդ.
 ո. Որ յամենայնի ես.
 տ. Որ ի քերովբէական.
 տ. Ժողովեալ ընտրելոց.
 ճշ. Որ ի հարաշարժ.
 141ա. Կանոն Յովիմանու Կարապետին
 օ. Չմարգարէ բարձրելոյն.
 Որ յորովայնէ ընտրեցար.
 Հ. Չուարճանայ այսօր.
 ո. Չքեզ ճշմարտութեան.
 տ. Առաքեալն յԱստուծոյ.
 Հ. Նախապաշխարանին բանին.
 ո. Կարապետ արքայութեան.
 տ. Երկնազաւթացին Յովհաննէս.
 143ա. (Կանոն Աշխարհամատարան)
 144ա. Կանոն Գրիգորի (Լուսաւորչիմ)
 օ. Ով երջանիկ տէր սուրբ.
 Ով երանելի տէր սուրբ.
 Արմատ ճշմարիտ.
 Որ քրիստոսանութիւն.
 Հ. Որ առաքեցեր զսիրելի.

- ո. Բարեխօսութեամբ քահանայա-
 տ. Առաջնորդ հաւատոյ. [պետին
 մկ. Հրաշափառ Աստուած.
 ճշ. Հովիւ քաջ բանաւոր.
 Հբ. Որ կոչեցար յորդեգրութիւն.
 146ա. (Կանոն Հովսէփմեանց)
 օ. Անճինք նուիրեալք (Ա-Ք).
 Հ. Այսօր զանյաղթելի.
 ո. Քրիստոս Աստուած.
 տ. Պարկեշտ կանայք.
 մկ. Յիշատակ Քրիստոսի.
 Հբ. Անսկիզբն Բանդ.
 151բ. (Կարապետ) Սանդիտոյ
 Քեւ պարծի այսօր.
 151բ. Կանոն Տաղամակին
 153ա. Կանոն վարդապետին
 օ. Որ ի լերին.
 Երեւի երբեմն.
 Հ. Չանճառելի խորհուրդ.
 մ. Չանճառելի զլոյս.
 ո. Ի Թաթօր լերին.
 տ. Քրիստոս Աստուած մեր.
 տ. Այսօր զխորհուրդ քո.
 մկ. Լերինք ցնծասցեն.
 ճշ. Ուրախացիւր պսակ կուսից.
 Հբ. Այսօր ի լերին Թաթօր.
 155բ. Կանոն Շոգապետին
 156բ. Կանոն Նաւակտեաց Խաչին
 157բ. Կանոն Սրբոյ Խաչին (Ա-Է օր)
 165բ. Կանոն վարապայ Խաչին
 166բ. Կանոն Գիւտ Խաչին
 168ա. Թաղաւոր Թաթօրեան մաշու
 169ա. Կանոն Մարգարէից
 օ. Որ զաստուածային.
 Որ առաքեցեր.
 Հ. Որ յերկնային.
 ո. Որ զծածկեալ խորհուրդ.
 տ. Երգս Թեալ մարգարէիցն.
 տ. Ճառագայթ անճառ.
 մկ. Որ զյառաջագոյն ընտրեալսն.
 171ա. Կանոն սրբոց վարդապետաց
 Հ. Սքանչելագործ Աստուած.
 ո. Որ զշնորհս աստուածային.
 տ. Անճառելի Նորհօգ.
 մկ. Նմանեալ Մովսիսի.
 172ա. Կարապետ սրբոց Սուրբապետ
 Ստուգութեամբ տեղեկացեալք.
 172ա. Վախանայ. Չարմանալի է.

172բ. Ղեւոնդեանց. Երզեմբ. ձեզ.
Պայծառացան.

174ա. Դաւթի Դուռնեցւոյն. Լցեալ.

174բ. Կիրակոսի. Յարմատոց բարեաց.

175ա. Ատոմանց. Աղաչեմբ. զքեզ.

175ա. վարդանանց. Արիացեալք առ.

175բ. Բարսղի. Լուսապայծառ.

176ա. Ոսկեանց. Որք արժանաւորեցայք.

176ա. Հայրապետաց. Ով հրաշալի.

177ա. Կանոն Խաթորէն մարտիրոսաց.

195ա. Օրհնութիւնք Յարութեան (ԱԶ-

ԴԶ).

Բաւական է հարեւանցի աղնարկ մը՝ տեսնելու համար շարակնոցին պարզութիւնը, որ զլիսաւորաբար կը պարունակէ չորս տէրունական կանոններու խումբեր, միջանկեալ ունենալով սուրբերու կանոններ եւ շարականներ: Առաջին խումբի սուրբերու կանոնները, սկսեալ Անտոն Անապատականէն մինչեւ Քառասուն մանկանց կանոնը, միասին կը կազմեն ամբողջութիւն մը, ունենալով նոյն յօրինուածքը (Օրհնութենէն մինչեւ Մանկունք), ինչ որ կը մատնանշեն հայ եկեղեցւոյ ունեցած յատուկ պաշտամունքը՝ սուրբերու որոշ դասակարգի մը, որոնք պատուուած են յատուկ շարականներով:

Անդրադարձութեան երկրորդ կէտը Շնորհալիի շարականներու բացակայութիւնն է, գոնէ անոնց՝ որոնց հարադատութեան մասին տարակոյս չունինք. այսպէս վարդանանց Նորահրաշք, Ղեւոնդ Օրհնութիւնէն մինչեւ Տէր յերկնիցը, Այսօր անճառը, Ժամբողութեան երգերը, այնպէս որ արդարացի կերպով կրնանք տարակուսիլ թէ մի գուցէ շարակնոցը պարունակէ նախաշնորհալեան շարականները միայն, եւ որով այն շարականները՝ որոնք կիսաբերան կը շնորհունին Շնորհալիի, գրուած ըլլան Շնորհալիէ շատ առաջ:

Այս հարցին քննութիւնը սկսելէ առաջ տեսնենք երկրորդ ձեռագիր մըն ալ, որ կու գայ բանալու մեր առջեւ նոր հորիզոն մը, յատուկելով շատ մը տարակոյսներ:

Ս. Ղազարի թիւ 97 շարակնոցի պարզ յօրինուածքը ԺԳ. դարու կէսին կ'անհետանայ: Մեզի հասած են Կիլիկիա եւ Արեւելեան Հայաստան օրինակուած ձեռագիրներու շարք մը, նոր խմբագրութեամբ, ճոխացած նոր շարականներով, որոնք յանկարծ երեւան կ'եկնեն: Շարակնոցի այս նոր խմբագրութիւնը շուտով կ'ընդհանրանայ ու կը տարածուի ամէն կողմ, բնականաբար իր ընծայած յօրինուածքին եւ դործածութիւնը գիւրամատչելի ըլլալուն համար. ամբողջապէս մոռացութեան կը մատնուին թիւ 97ի նման շարակնոցներ, որոնք այլեւս անկատար կը նկատուէին, եւ որով անյարմար ծիսական դործածութեան: Մեր նպատակէն դուրս է քննել այս վերջին խմբագրութեան ծագումը եւ Ժամանակը, սակայն մասամբ նպաստած կ'ըլլանք այդ գործին, երբ անդրադառնալու ըլլանք Երեւանի Մատենադարանի թիւ 9838 ձեռագրի մասին, օրինակուած 1193 թուականին, որ կարելի է ըսել թէ կը կազմէ անցքի շղթայ մը թիւ 97 հին խմբագրութեան եւ Կիլիկեան նոր խմբագրութեան շարակնոցներուն միջեւ:



ՍԿԻՉԲ ՅԻՍՈՒՍ ՈՐԴԻԻ
Մատենադարան Ս. Ղազարու, Ձեռ. ք. 4
Գր. Սեբաստիա, 1351ին (?)
Բն. մեծուքիւն ճախակողմեան նկարին՝ 7,5×5

Երեւանի թիւ 9838 շարահանոցն ալ կը պատկանի հին խմբագրութեան: Դիտելի եւ յատկանշական է օրինակութեան վայրը, Երուսաղէմ: Շարահանոցի պարունակած շարականները կարելի է բաժնել երկու տեսակի, այսինքն կրճատ եւ բաց շարականներու: Կրճատը սելով կը հասկնանք անոնք որ օրինակուած են համառօտութեամբ, ղենելով միայն բառերուն առաջին դիրքերը, զանց ընելով ստէպ բառեր եւ վերջաւորութիւններ: Մինչ բաց շարականները դրուած են բառ առ բառ, խղճամիտ կէտագրութեամբ եւ խաղագրութեամբ: Պատճառը թէ ինչո՞ւ շարական մը կրճատ կը դրուէր, Սահակ Վրդ. Ամատունի կու տայ մեզի ճշգրիտ մեկնութիւնը ըսելով. «Թոյլ եւ տկար յիշողութիւն ունեցող ժամասաց դպիրներին մի նշանով հասկացնել, մտաբերել եւ որոճալ տալ իրենց կարգացածը. եթէ ենթադրենք որ նոքա արագ արագ սերտում եւ բերան էին առում մի շարական իրենց տանը եւ մոռանում եկեղեցում»: Արդ կրնանք եզրակացնել թէ կըրճատ շարական մը ընտանի եւ ծանօթ է դպիրին, եւ որով «այն շարականը հին է, նոր չէ»⁴:

Համեմատութիւն մը ընելով Ս. Ղազարի թիւ 97 եւ Երեւանի թիւ 9838 շարահանոցներուն միջեւ, կը տեսնենք որ Երեւանի ձեռագիրը իր շարադասութեամբ կը հետեւի Ս. Ղազարի օրինակին, ոչինչ ետեւառաջութիւններով, եւ ունի.

Ա. շարականներու շարք մը, դրուած բաց ձեւով, որոնք կը պակսին Ս. Ղազարի օրինակին մէջ, եւ են.

- Թղ. 26ա². Կանոն սրբոց Հրեշտակապետացն
 օ. Որ յանէից ստեղծեր: Հ. Անսկիզրն Հայր: ո. Որ ի հրեղէն զօրաց:
 տ. Անմահ արքային անարուեստ: մկ. Երկնաւոր հօտ ընտրեալ: ճչ. Այսօր ուրախացեալ:
- Թղ. 34ա¹. Այլ կանոն համօրէն առաքելոց
 օ. Իմաստութիւն երկնային: Հ. Որ ի հօրէ: ո. Հայր առաքող: տ. Այսօր երկնայնոցն: մկ. Առաքեալք Աստուծոյ. Բարեկամք. Գերագոյն:
- Թղ. 79բ¹. Սրբոյն Գրիգորի այլ կանոն
 Հ. Որ ի հօրէ առաքեալ: ո. Որ կոչեցեր զհեռացեալքս: տ. Այսօր զիմանալի լուսոյն: մկ. Այսօր տօնէ եկեղեցի:
- Թղ. 81ա¹. Կանոն որդւոցն Գրիգորի
 Հ. Որ զլոյս աստուածային: ո. Որ հրաւիրեցեր զորդիս: տ. Այսօր ընդ երկնային զուարթումսն: մկ. Աստուածային հաւատոյ:
- Թղ. 88ա¹. Կանոն երկրորդ աւուր վարդապառի
 Հ. Ճառագայթ փառաց: Հ. Այսօր զխորհուրդ անճառելի: ո. Որ զճառագայթս աստուածային: տ. Յնծայ այսօր փառօք: մկ. Օրհնեցէք մանկունք ընդ:
- Թղ. 89բ¹. Կանոն երրորդ աւուր վարդապառի

- օ. Այսօր որ էն ի: Հ. Այսօր զխորհուրդն անճառ: ո. Որ յանսկիզքն էէն: տ. Այսօր ընդ հրեշտակս: մկ. Լերինք ամենայն:
- Թղ. 30ա¹. Շարական Տրդատայ քաղաւորի. Որ գերազոյն քան:
- Թղ. 52բ². Այլ Հարց Գալստեան. Որ ի քրովբէական աթոռ:
- Թղ. 82ա². Շարական Ներսիսի. Որ ընտրեցար:
- Թղ. 82բ¹. Շարական Սահակայ. Որ յարմատոց:
- Թղ. 101բ². Շարական Եւստրատիոսեանց. Որ զհուր սիրոյ:
- Թղ. 102ա². Շարական Երկուց բիւրուցն. Այսօր ընդ անմարմնոցն:
- Թղ. 103ա². Շարական Գրիգորի աստուածաբանի. Որ լուսով աստուածային:
- Թղ. 103բ¹. Շարական Յովհաննու ոսկեբերանի. Որ յանսկիզքն:
- Թղ. 103բ². Շարական Թէոդորոսի. Որ ընտրեցեր ի սկզբանէ:
- Թղ. 104բ¹. Շարական վարդաւանց. Նորահրաշ պսակաւոր:

Բ. շարականներ, որոնք Ս. Ղազարի օրինակին մէջ գտնուելով հանդերձ, բաց զրութեամբ ունի Երեւանի օրինակը.

- Թղ. 20բ¹. Կանոն երկրորդ աւուր փոխման Աստուածածնի:
- Թղ. 22բ¹. Կանոն երրորդ աւուր փոխման Աստուածածնի:
- Թղ. 29ա¹. Օրհնութիւն Թէոդոսի քաղաւորի. Որ գերկնաւոր Թաղաւորութեանդ:
- Թղ. 54բ². Օրհնութիւն մեծի երկուշաբթի. Անեղն ի Հօրէ ծնեալ:
- Թղ. 56ա¹. Օրհնութիւն մեծի երեքշաբթի. Իմաստուն կուսանքն:
- Թղ. 57ա². Օրհնութիւն մեծի Զորեքշաբթի. Որ յաթոռ փառաց բաղմեալ:
- Թղ. 98բ². Օրհնութիւն Մարգարէից. Որ զաստուածային զօրութիւնդ քո:
- Թղ. 103ա¹. Շարական Բարսղի. Լուսապայծառ իմաստիւք:

Գ. շարականներ, որոնք կը պակսին Ս. Ղազարի օրինակին մէջ, եւ Երեւանի օրինակը ունի կրճատ զրութեամբ.

- Թղ. 105ա². Կանոն սրբոց հայրապետացն
օ. Այսօր սրբոց հայրապետացն: Հ. Որ էիր յառաջ քան: ո. Աստուածային ճառագայթ: տ. Հանդիսացեալ ընդ երկնայնոցն:
- Թղ. 107բ². Կանոն Յովնանու մարգարէի
Հ. Որ զանճառելի ծածկապէս: ո. Ողորմութեանց բաշխող: տ. Կանխեալ Յովնանու առաքելով: Ծագեալ առաւօտ խաղաղութեան: մկ. Յովնան մարգարէն աղաղակէր: (Կը պակսին Որ առաքեցեր զՅովնան, եւ Ապաշխարութեամբ ապրեցաւ քաղաքն, շարականները):

Անցնինք քննելու այս բոլոր շարականները եւ կանոնները մի առ մի, կատարելու համար անոնց վրայ անդրադարձութիւններ, միշտ աչքի առջեւ ունենալով Ս. Ղազարի թիւ 97 եւ Երեւանի թիւ 9838 ձեռագիր շարակնոցները, ինչպէս նաեւ մեզմէ առաջ այս հարցով դրադող մասնագէտներու տեսութիւնները, որոնցմէ մեծագոյններն են Հ. Գ. Աւետիքեան իր «Բացատրութիւն շարականաց»ով, Սահակ Վրդ. Ամատունի «Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ» ուսումնասիրութեամբ, ու դեռ վերջերս, տասնեակ տարի մը առաջ լոյս տեսած ուսումնասիրութիւն մը Գրիգոր Յակոբեանէ:

Ա. ՄԱՍ
ԿԱՆՈՆՆԵՐ ՈՒ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ
ՈՐՈՆՑ ՀԱՐԱԶԱՏՏՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄՆԱՅ ԱՆՎԻՃԵԼԻ

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՑ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ

Ներսէս Շնորհալի կաթողիկոսական դահը բարձրանալէ առաջ գրած է Հրեշտակաց ճառը, որու վերջաւորութեան յիշատակարան-ոտանաւորին մէջ կը կարդանք.

«Ձանծին բարեացն ծընող բանիս,
Մի մոռանայք տօնող վեհիցս,
Ձներսէս եղբայր հայրապետիս,
Որոյ անուն տէր Գրիգորիս,
Յորմէ խնդրոյ զիջեալ ըստ իս,
Յարմարեցաւ շինուած ճառիս,
Եւ եղանակ շարականիս,
Առ ի պատիւ մեծի տօնիս»⁵:

Դիտելի է որ արտաքին աղբիւրներն ալ միաբերան կը համաձայնին իրարու. բացի Կիրակոսէ եւ Սարգիս երէցէ, Ներսէս Շնորհալիի կենսագիրը բացայայտ կերպով կը շեշտէ թէ «գրեաց եւ ըզսրբոց Հրեշտակապետացն եւ զերկնաւոր զօրացն ճառս...», արար եւ երգս խորհրդականս եւ պատշաճաւորս աւուր տօնի նոցին, եւ աստուածիմաստ շնորհօքն պայծառացոյց զօր յիշատակի նոցին»⁶: Նոյն տուածիմաստ շնորհօքն զանազան ձեւերով կը կարդանք նաեւ Յայսմա-այս վկայութիւնը զանազան ձեւերով կը կարդանք նաեւ Յայսմա-ւուրներու մէջ, եղելութիւն մը որ չ'իրականանար Շնորհալիի գրած միւս շարականներու համար:

Հրեշտակաց կանոնը ձեռագիր տօնացոյցներէ կոչուած է «Նոր»:
Երեւանի թիւ 2092 տօնացոյցի հեղինակը Սարգիս երէց կը գրէ. «Նոյնմբեր Ը. Հրեշտակապետացն Գաբրիէլի... Հարցն եւ զշարակ-ներն զնորն ասա»: Ս. Ղազարի 1287ի տօնացոյցը կը նշէ մեզի այն շարականները որ կը գործածուէին «նոր»ը գոյութիւն ունենալէ ա-ռաջ. «Սրբոց Հրեշտակապետացն... թէ գիտես զիւրն ասա, եւ թէ ուղ. «Սրբոց Հրեշտակապետացն... թէ գիտես զիւրն ասա, եւ թէ ոչ դու գիտ. ասա. (հ) Զինուորութիւնք. ո. ԲԶ. Օրհնեցուք եւ. տ. ԴԿ. Միաստուածութիւնք»:

Բոլոր այս մանրամասնութիւնները դուցէ աւելորդ նկատուին Հրեշտակաց կանոնին մասին, որու հարազատութեան հարցը տարա-կոյս չի վերցնէր: Մեր նպատակն է գործածել այս կանոնը իբր կըռ-ուան մը, ապացուցանելու համար յաջորդ կանոններու հարազատու-

5. ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Բամբ չափաւ, Վենետիկ, 1830, էջ 276:
6. ՍՈՒԽԻԲ ՀԱՅԿԱԿԱՆԲ ԺԴ., Վենետիկ, 1854, էջ 40:

թիւնը: Ու միթէ Շնորհալիի դրած այս կանոնին բացակայութիւնը Ս. Ղազարի թիւ 97 շարականոցէն, ապացոյց մը չէ՞ ձեռագրին նախնականութեան եւ պարունակած կանոններու հնութեան, ու փոխադարձ Երեւանի 1193 թուականի Շարականոցին մէջ գտնուիլը այս կանոնին, իր բաց դրութեամբ, նշան մը չէ՞ թէ Շնորհալիի մահէն հաշիւ 20 տարի ետք դեռ նոր մտած էր շարականոցէն ներս:

ԿԱՆՈՆ ՀԱՄՕՐԷՆ ԱՌԱՔԵԼՈՑՆ

Շարականացոյցները բոլորն ալ միաբերան Շնորհալիի կ'ընծայեն «Եօթանասուն եւ երկու առաքելոցն» կանոնը: Շարականոցներու հին կարգաւորութեան մէջ նման վերնագրի մը տակ կը գտնենք հետեւեալ պատկերը.

- Կանոն համօրէն առաքելոցն
- օ. Երանելի սուրբ առաքեալք
 - Չորս առեալ ի ծովակէն.
 - հ. Էակից Բանդ Հօր եւ Հոգւոյն.
 - ո. Տէր որ զգթութիւնդ քո զառատ.
 - տ. Առաքեալք յԱստուծոյ սիւնք.
 - Որք ի սկզբանէ պատուեալք եղեն.
 - մկ. Աշակերտք Քրիստոսի եւ առ ամենայն.
 - Որ սիրողք էք արարչին արարածոց.
 - հբ. Ժողովեալ սուրբ առաքեալքն.
 - Լուսաւորք երեւեցան երանելի:

Այս է պատկերը Շնորհալիէ առաջ կիրարկուած շարականներուն, որ պահուած է Ս. Ղազարի թիւ 97 շարականոցին մէջ (թղ. 47ա): 1287ի տօնացոյցը (Ձեռ. թիւ 186) այս կանոնը երգել կու տայ առաքեալներու բոլոր տօներուն, ծանօթ չըլլալով ուրիշ ոչ մէկ կանոնի. «Գչ. Անանիա առաքելոյ, ԺԲ. վարդապետաց... հց. առաք(ելոցն). ԱՁ. Էակից Բանդ». «Եչ. Դիոնիսիոսի եւ Տիմոթէոսի, Տիտոսի... հց. առաքելոց»: Նոյն իսկ «ՀԲ. առաքելոցն» տօնին օրը յատուկ հարց մը չի նշանակեր տարբեր էակից Բանդ-էն: Ասոր հակառակ Սարգիս Երէց իր տօնացոյցին մէջ կը զանազանէ հինը նորէն, գրելով. «Շբ. ՀԲ. առաքելոցն, հարց եւ շարակներ զնորերն ասա, եւ թէ ոչ էակից Բանդ» (Ձեռ. Երեւանի թիւ 1588, թղ. 229ա):

Երեւանի թիւ 9838 շարականոցը վերոյիշեալ կանոնը իր հնութեան պատճառով կ'օրինակէ կրճատ ձեւով, ապա անմիջապէս ետք, բաց ձեւով գրուած՝ ունի «Այլ շարական համօրէն առաքելոց», որու պատկերը հետեւեալն է.

- օ. Իմաստութիւն երկնային իջեալ ի վերուստ.
- Որ զօրինակ երկոտասան առաքելոց քոց.

- հ. Որ ի հօրէ առաքեցար ի փրկութիւն.
- ո. Հայր առաքող միածնին որում.
- տ. Այսօր երկնայնոցն վայր իջեալ.
- մկ. Առաքեալք Աստուծոյ ընտրեալք:

Հ. Գարբիէլ Աւետիքեան առանց տեսած ըլլալու մեր այս ձեռագրական տարբերակները եւ նորութիւնները, շատ լաւ գիտէ թէ կանոնս դրած է Ներսէս Շնորհալի, «որում վկայէ ընտանութիւն ոճոյ բանից եւ բարեյարմարութիւն իմաստիցն»⁷. սակայն հիմնուած Կիրակոս Գանձակեցիի մէկ բացատրութեան վրայ թէ Շնորհալի դրած է նաեւ «Առաքելոց» կանոնը, եւ «Իմաստութիւն երկնային» իր ամբողջ սարքով եւ պարունակութեամբ ուղղուած է աշակերտներուն, հետեւանք կը հանէ թէ «զասացեալն նորա (Կիրակոսի) մարթ է իմանալ եւս ի վերայ շարականին «Երանելի սուրբ առաքեալք հրաւիրեալք»: Սակայն Ս. Ղազարի թիւ 97 եւ Երեւանի թիւ 9838 շարականոցներու համեմատութենէն կը տեսնուի թէ «Երանելի սուրբ առաքեալք հրաւիրեալք» հին կանոնին Օրհնութիւնն է, եւ կը գտնուի հին խմբագրութեան մէջ, մինչ Կիրակոսի «առաքելոց» բացատրութիւնը պէտք է հասկնալ «Իմաստութիւն երկնային իջեալ ի վերուստ» ամբողջ կանոնին համար, որ իբր նոր օրինակուած է բաց դրութեամբ 1193 թուականի շարականոցի մէջ:

Սահակ Վրդ. Ամատունի երեք ձեռագիրներու մէջ հանդիպած է «Ժողովեալ սուրբ առաքեալքն» եւ «Լուսաւորք երեւեցան» պարականոն շարականներուն, որոնք ընդօրինակուած ըլլալով շնորհալեան «ՀԲ. աշակերտաց» կանոնէն անմիջապէս ետք, առանց տարակոյսի կը վերագրէ զանոնք Շնորհալիի եւ կը հրատարակէ⁸: Ամատունի չունի բաւարար փաստ, որովհետեւ նոյն այս երկու շարականները կը գտնենք մեր նախաշնորհալեան թիւ 97 շարականոցին մէջ, նշանակուած իբր Համբարձի: Թողունք որ Շնորհալիի հարազատ շարական մը գծուար է որ մնայ մէկ կամ երկու ձեռագրի մէջ, ու բաժնուելով բուն կանոնէն անցնի պարականոններու շարքին:

ԿԱՆՈՆՔ ԱՂՈՒՀԱՑԻՑ ԿԻՒՐԱԿԵՒՑ

Շարականներու ամբողջական մարմին մըն է, որոնց հարազատութեան մասին տարակոյս չկայ: Շնորհալի հայրապետին յատուկ շնորհքով օժուել շարականներ են, որոնք մեծադոյն ապացոյցն են առանց հարազատութեան: Շնորհալիէ առաջ քառասնորդաց կիրակիներուն կը կիրարկուէին Յինանց կանոններէն, ինչպէս կը վկայէ Ս.

- 7. Հ. Գ. ԱԻԵՏԻՖԵԱՆ, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 145:
- 8. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՄԱՏՈՒՆԻ, Հիմ եւ նոր պարականոն կամ անվաւր շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 30-31:

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՁԻՆ

ԺԳ. դարու Սարգիս Երեցի շարականներու հեղինակներու ցանկին մէջ կը կարդանք թէ Շնորհալիի են «զսուրբ Գրիգորին զնորերն»։ Երեւանի թիւ 2092 տօնացոյցը Ս. Գրիգորի տօներուն համար նշանակած է. «Գշ. Սրբոյն Գրիգորի ելն ի վիրապէն. Հց. զնորն ասա, եւ թէ ոչ Որ առաքեցեր. ի Սահմի տասն» (թղ. 226ա). ապա իր տեւը «Շբ. տօն Սրբոյն Գրիգորի. Հց. Որ առաքեցեր զսիրելի. եւ թէ դիտես՝ զնորն. ի Տրէի Ժ» (թղ. 226ա). Ս. Գրիգորի երրորդ տօնին, մոռտն ի վիրապն «Շբ. տօն Սրբոյն Գրիգորի, Հց. եւ շարականն զնորերն ասա, եւ թէ ոչ՝ Որ առաքեցեր. Տրէի տասն» (թղ. 233բ)։

Հին կանոնը, որու կ'աւանդուի, պահուած է թիւ 97 Շարակնոցին մէջ, եւ որու Հարցը «Որ առաքեցեր» իր բովանդակ պատկերով տօնացոյցներէն կը յանձնարարուի երգել Ս. Գրիգորի երեք տօներուն ալ։ Իսկ յիշատակուած նորերը, առաջին անգամ օրինակուած կը տեսնենք 1193 թուականի Շարակնոցին մէջ, գրուած բաց ձեւով, որ նշան է անոնց նոր ըլլալուն, մինչ «Որ առաքեցեր»ը հին ըլլալով կը ներկայանայ կրճատ ձեւով։ Նոր կոչուած շարականները ժամանակի ընթացքին տեղաւորուած են Քառասնորդաց Ե. շաբաթ օրը, Ս. Գրիգորի վիրապ մտնելու յիշատակին օրը, եւ ունին հետեւեալ պատկերը.

Հ. Որ ի հօրէ առաքեալ արեղակն արդար
ո. Որ կոչեցեր զհեռացեալքս ի հարսանիս.
տ. Այսօր զիմանալի լուսոյն ծագողն.
մկ. Այսօր տօնէ եկեղեցի ուրախութեամբ.

Հ. Գարբիէլ Աւետիքեան այս շարականներու հեղինակին մասին խօսած ատեն կը գրէ. «Ոմանք Մովսիսի Խորենացւոյ ասեն արարեալ... սակայն տարակուսելի է... մանաւանդ զի աստանօր եղեալ Հարցն եւ այլ լծորդը իւր ղյետին դարուց ոճն առաւել յինքեանս բերեն քան զԽորենացւոյն. օրինակ ինչ ընծայէ Ներսէսի Շնորհալւոյ»¹⁶։

Արդարացի է նրբատես Աւետիքեանի անդրադարձութիւնը։ Թէ կանոնը գրուած է Ներսէս Շնորհալիի՝ ունինք հետեւեալ նշանները. նախ որ բացակայ է հին կարգաւորութիւն ունեցող ձեռագիր Շարակնոցներու մէջ (Ձեռ. Ս. Ղազարու թիւ 97, Երուսաղէմ թիւ 1654). Երեւանի 1193 թուականի Շարակնոցը հին կարգաւորութեան հետեւելով հանդերձ՝ իր նոր ձեւով օրինակած շարականներուն մէջ, Հրեշտակաց կանոնին եւ Վարդանանց Նորահրաշին հետ ունի այս «նոր» կանոնը։ Ս. Ղազարի ԺԳ. դարու թիւ 677 Տօնացոյցը, որ առանձին

16. Հ. Գ. ԱԻՆՏԻԲԵԱՆ, անդ, էջ 199-200։

խնամքով օրինակած է միայն Քառասնորդաց Կիրակիներու բովանդակ կանոնները եւ ապա ժամասացութեան բոլոր երգերը (Արարեալ, Նայեաց սիրով, Այսօր անճառ...), միջանկեալ ունի Ս. Գրիգորի «նոր» կոչուած կանոնը, նշան թէ անոր ալ հեղինակը նոյնն է Քառասնորդաց կիրակիներու եւ ժամերգութեան երգերու հեղինակին հետ։ Այս ամէնուն վրայ ուրեմն ճշգրիտ է Սարգիս Երեցի վկայութիւնը թէ «զսուրբ Գրիգորին զնորերն... Տէր Ներսէս կաթաղիկոսն ասաց»։

Սահակ Վրդ. Ամատունի շարականներու մասին կատարած ուսումնասիրութեան մէջ, այս կանոնին մասին խօսած ատեն, այնպէս կը թուի որ առանց բաւարար պատճառի նոյն Շնորհալիի գրիչին կ'ընծայէ այս «նոր» կոչուած կանոնին «նոր» Օրհնութիւն մըն ալ, գրելով. «Որպէս Լուսաւորչի Որ ի Հօրէ Հարցը իւր սարօք, այսպէս եւ նրա նոր Օրհնութիւնը, Որ անճառից փառաց, գրել է Ներսէս Շնորհալին, պահելով Օրհնութեան մէջ այն աղը, որ զանգուած են Որ ի Հօրէ իւր սարօք»¹⁷։

Սակայն զարմանալին այն է որ Սահակ Վրդ.ի տեսած հարկաւոր ձեռագիր Շարակնոցներուն մէջ միայն մէկ հատն է որ պահած է այս Օրհնութիւնը. Ս. Ղազարի հարկերէ աւելի Շարակնոցներէն ոչ մէկը ունի այս նոր Օրհնութիւնը. մինչ ձեռագրական օրէնքներու համաձայն դժուար է որ Օրհնութիւն մը բաժնուի Հարցէնքներու համաձայն դժուար է որ Օրհնութիւն մը բաժնուի Հարկերի է որ յաջորդ գրիչները յարգեն ու պատուեն Հարցը իր սարկարի է որ յաջորդ գրիչները յարգեն ու պատուեն Օրհնութիւնը։ Նկատելի է նաեւ որ Յովհաննէս Երզնկացիի «Այսօր զուարճացեալ» շարականը իր բոլոր երկարութեամբ (Ա-Բ) կը թափառի ամէն Շարակնոցի մէջ առանց հաստատուն տեղ մը ունենալու, բայց որովհետեւ սիրելի է Հայուն Գրիգոր Լուսաւորչի ամէն մասունք, պահած են շարականը ձեռագիրներու մէջ, ստէպ յաւելուածներու մէջ, գուցէ առանց իսկ գործածելու, գոնէ մինչեւ ժամանակ մը։

Ուստի դժուար է «Որ անճառից փառաց» պարականոն Օրհնութիւնը գրուած ըլլայ Շնորհալի հայրապետէն։

* * *

Երեւանի 1193 թուականի պարունակած նոր շարականները, առիթ կու տան մեզի կատարելու նորանոր անդրադարձութիւններ ալ։ Տարակոյս չունինք այլեւս թէ ձեռագիրը կը պարունակէ հարազատ կերպով շնորհալեան շարականներ (Հրեշտակապետաց, Վարդանանց,

17. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՄԱՏՈՒՆԻ, անդ, էջ 77։

Գրիգորի Լուսաւորչին), եւ որովհետեւ Ս. Լուսաւորչի կանոնին կը յաջորդեն ուրիշ կանոն մը եւ զոյգ շարականներ, կարելի է արդարացի կերպով ենթադրել թէ անոնք ալ գրուած ըլլան նոյն ինքն Շնորհալիի:

Երեւանի Շարականոցը ունի հետեւեալ նոր շարականները իրարու ետեւէ.

- Թղ. 79բ¹. Սրբոյն Գրիգորի այլ շարական.
Հ. Որ ի Հօրէ. եւն.
Թղ. 81ա¹. Որդւոց եւ քոռանց սրբոյն Գրիգորի.
Հ. Որ զլոյս աստուածային.
ո. Որ հրաւիրեցեր զորդիս.
տ. Այսօր ընդ երկնային զուարթունսն.
մկ. Աստուածային հաւատոյ հարցն.
Թղ. 82ա². Շարական ներսիսի հայրապետի.
Որ ընտրեցար յԱստուծոյ հովիւ.
Թղ. 82բ¹. Շարական սրբոյն Սահակայ.
Որ յարմատոց հարցն սրբոց:

Գրաւոր աւանդութիւնը, այսինքն շարականներու ցանկերը Որդւոց եւ Թոռանց կանոնը կ'ընծայէ Ս. Ներսէս Լամբրոնացիի: Նկատելի է սակայն որ 1193ին, Ներսէս Լամբրոնացիի կենդանութեան, Երուսաղէմ օրինակուած ձեռագրի մէջ, Շնորհալիի շարականներու կողքին, դժուար է որ տեղ գրաւէ: Գուցէ աւելի տրամաբանական թուի Թոռանց ամբողջ կանոնը ընծայել անոր՝ որ շարադրած է Ս. Գրիգորի կանոնը, ինչպէս նուազ տրամաբանական կը թուի Զատիկի եւ Նոր կիրակիի կանոնները գրող անձին ընծայել Թոռանց պատկերը: Նկատած որ վերեւ յիշուած զոյգ կանոնները եւ զոյգ սուրբերու շարականները կը պակսին հին խմբագրութեան պատկանող թիւ 97 ձեռագրին մէջ, ու յանկարծ միասին կը յայտնուին 1193 թուականի Շարականոցին մէջ, ոչ թէ կրճատ այլ բաց ձեւով, կ'ուզենք հաստատել թէ բոլորն ալ գրուած են Շնորհալիի յատուկ օծութեամբ եւ գրոշմով:

Այս եզրակացութեան կը հասնինք հիմնուելով ոչ թէ միայն ձեռագրին, այլ նաեւ անոնց ներքին կապակցութեան վրայ. անոնք բոլորն ալ սերտօրէն զօդուած են իրարու, ըլլա՛յ գաղափարներով, ըլլա՛յ բառերով ու ասացուածքներով: Դիտելի է որ Լուսաւորչի կանոնը գրուած ըլլալով սուրբին վերապ մտնելուն յիշատակով, շարականները ունին յիշատակը փառաբանելու բնոյթը, այսինքն անոնցմէ ոչ մէկը ուղղուած է Ս. Գրիգորի, այլ Աստուծոյ, եւ կամ յորդոր մըն են հաւատացեալներու. մինչ Թոռանց կանոնը ու յաջորդ երկու սուրբերու շարականները աղօթքներ են ուղղուած սուրբերուն: Ահա այս կէտը ստեղծած է որոշ զանազանութիւններ երկու կանոններուն մէջ: Ասով հանդերձ երկու կանոններուն միջեւ բազմաթիւ են նմանու-

թիւնները, որոնցմէ ուշադրութիւն գրաւող առաջին կէտը լոյսի եւ խաւարի գաղափարներն են.

ԿԱՆՈՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԿԱՆՈՆ ՈՐԳԻՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ

- | | |
|---|--|
| 1. Ծագեցեր ընդ տիեզերս զլոյս քո (Հ. 1) | 1. Զլոյս աստուածային... ծագեցեր եւ ի խաւարէ կոապաշտութեան վերածեր (Հ. 1) |
| 2. Զխաւարն անդիտութեան... հալածեցեր լուսափայլ բանիւ սրբոյն Գրիգորի (Հ. 3) | 2. Արփիափայլ ճառագայթիւք լուսազարդեալ (Հ. 2) |
| 3. Օրհնեցէք զլոյսն անսկիզբն (Հ. 5) | 3. Լուսաւորեցեր զեկեղեցիս... լուսով քո Քրիստոս (ո. 2) |
| 4. Լուսաւորեալք իմաստութեամբ ի ձեռնն սուրբ Լուսաւորչին գովեցէք ըզլոյսն (Հ. 6) | 4. Զարդարեալ նորացուցեր պայծառ ծագմամբ (ո. 2) |
| 5. Զիմանալի լուսոյն ծագողն ի խաւարի նստելոցս (տ. 1) | 5. Ծագեցաւ քեւ ընդհանուր լոյս (մկ. 1) |
| 6. Յորդիս լուսոյ նովաւ ծնեալք (տ. 2) | 6. Ի Հօրէն լուսոյ բղխեալ (մկ. 2) |
| 7. Լուսաւորեալ պայծառացաւ (մկ. 1) | |
| 8. Ցնծան նորածնեալ որդիք լուսոյ (մկ. 2) | |

Երկրորդ ուշադրութիւն գրաւող կէտը իմաստներու նոյնութիւնն է. այսպէս.

ԿԱՆՈՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ

ԿԱՆՈՆ ՈՐԳԻՈՑ ԵՒ ԹՈՌԱՆՑ

- | | |
|---|--|
| 1. Որ զխաւարն անդիտութեան հիւսիսականացս հալածեցեր լուսափայլ բանիւ սրբոյն Գրիգորի (Հ. 3) | 1. Որ զլոյսն աստուածային քո գիտութեան հիւսիսական աղանց ծագեցեր, եւ ի խաւարէ կոապաշտութեան վերածեր զքեզ ի ձեռն սուրբ Լուսաւորչին (Հ. 1) |
| 2. Այսօր երկնաւոր պատարագին կատարող քահանայութիւն ի ձեռն սուրբ քահանայապետին (Հ. 7)
Այսօր քահանայք... երկնայնոց քահանայութեանցն հաղորդեալք (մկ. 3) | 2. Այսօր երկնաւոր քահանայութեան հաղորդ քահանայք սուրբ եկեղեցւոյ, ընդ քահանայապետս աստուածային օրինօք պատուեալս (տ. 3) |
| 3. Այսօր տօնէ եկեղեցի ուրախութեամբ զյիշատակ սրբոյն Գրիգորի (մկ. 1) | 3. Այսօր... տօնելով զյիշատակ սուրբ հայրապետաց շառաւիղաց սրբոյն Գրիգորի (տ. 1) |
| 4. Այսօր... որդւոց Թորգոմայ (տ. 2) | 4. Այսօր որդիք Թորգոմայ (տ. 2) |

Երրորդ՝ յատկանշական ու դիտելի են երկու կանոններուն մէջ միեւնոյն բառերու գործածութիւնը. այսպէս.

Երկնային... երկինք

- | | |
|--|--|
| 1. Երկնային պատարագին կատարող (Հ. 7) | 1. Փոխեցան յերկնից արքայութիւնը (ո. 3) |
| 2. Բարձրացուցեր զմեզ ի յերկինս (ո. 3) | 2. Ընդ երկնային զուարթունսն (տ. 1) |
| 3. Ընդ փեսային երկնաւորի (մկ. 2) | 3. Օրհնեցէք զՀայրն երկնաւոր (տ. 1) |
| 4. Երկնայնոց... Հաղորդեալք (մկ. 3) | 4. Երկնաւոր քահանայութեանն Հաղորդ (տ. 3) |
| 5. (Հրաւիրեցան ի հարսանիսն անապական մկ. 2) | 5. Երկնայնոցն ի յերկրի Հաղորդ (մկ. 5) |
| 6. Երգէ... փառք ի բարձունս Աստուծոյ (տ. 4) | 6. Երգելով զփառս ի բարձունս (տ. 3) |

Հայաստանեայց

- | | |
|--|--|
| 1. Առաքեցեր Հայաստանեայց զսուրբ Գրիգոր (Հ. 2) | 1. Վերստին զարդարեցեր զեկեղեցիս Հայաստանեայց (Հ. 2) |
| 2. Այսօր ժողովուրդք Հայաստանեայց (Հ. 4) | 2. Լուսաւորեցեր զեկեղեցիս Հայաստանեայց (ո. 2) |
| 3. Ձաստուածային բանին պատմող ի Հայաստան աշխարհի (տ. 3) | 3. Ընդ երկնային զուարթունսն ժողովուրդք Հայաստանեայց (տ. 1) |
| | 4. Ծաղկեցաւ քեւ ընդհանուր լոյս Հայաստանեայց (մկ. 1) |

Նոր, նորագոյ, նորացուցանիմ, նորածնեալ

- | | |
|--------------------------------------|--|
| 1. Նորածնեալք աւաղանաւն (Հ. 6) | 1. Ձնորս զարդարեաց... զնորոգող բընութեանս (Հ. 5) |
| 2. Յորդիս լուսոյ նովալ ծնեալք (տ. 2) | 2. Ձարդարեալ նորացուցեր (ո. 2) |
| 3. Յնծան նորածնեալ որդիք (մկ. 2) | 3. Ծնեալք աւաղանաւն (տ. 2) |

Եկեղեցի

- | | |
|-------------------------------|--|
| 1. Այսօր երգէ եկեղեցի (տ. 4) | 1. Ձեկեղեցիս Հայաստանեայց (Հ. 2, ո. 2) |
| 2. Այսօր տօնէ եկեղեցի (մկ. 1) | 2. Եկեղեցիք հեթանոսաց (Հ. 5) |
| | 3. Քահանայք սուրբ եկեղեցւոյ (տ. 3) |

Ի յիշատակի

- | | |
|--|-------------------------------------|
| 1. Յիշատակի Լուսաւորչին (տ. 4) | 1. Ի յիշատակի քահանայապետաց (Հ. 6) |
| 2. Յիշատակաւ սուրբ Լուսաւորչին (մկ. 2) | 2. Ձիշատակ սուրբ Հայրապետացն (տ. 1) |
| | 3. Ի յիշատակի Հարցն սրբոց (տ. 2) |

Ի ձեռն

- | | |
|---------------------------------------|------------------------------------|
| 1. Ի ձեռն սրբոյն Գրիգորի (Հ. 5, ո. 1) | 1. Ի ձեռն սուրբ Լուսաւորչին (Հ. 1) |
| 2. Ի ձեռն սուրբ Լուսաւորչին (Հ. 6) | 2. Ի ձեռն սուրբ Հայրապետաց (ո. 1) |
| 3. Ի ձեռն սուրբ քահանայապետին (Հ. 7) | |

Ի ոլոր այս մանրամասնութիւնները, նմանութիւնները, հոգեբանութիւն մը ցոյց կու տան. արդեօք պէ՞տք է փրկենք դրաւոր աւան-

դութիւնը՝ ըսելով թէ թողանց կանոնը Լամբրոնացիին է, որ շարադրած է հետեւողութեամբ Շնորհալիի գրածներուն. միթէ նուաստացուցիչ չէ՞ Լամբրոնացիի մը համար. եւ եթէ ինքնագիր է, ինչո՞ւ աննման է զատկական եւ նոր կիրակիի կանոններուն՝ որոնք բոլորովին տարբեր բնոյթ ունին։ Անգամ մը եւս կ'ուզենք հաստատել թէ 1193 թուականի ձեռագիր Շարակնոցը կամայական կերպով չէ որ իրարու ետեւէ բաց կերպով օրինակած է այս կանոններն ու յաջորդ զոյգ շարականները. միեւնոյն գրիչին պատկանելու փաստն է այդ, զոր ամրացնելու համար կ'անցնինք տեսնելու ներքին նմանութիւնները Ս. Ներսէս եւ Ս. Սահակ Հայրապետներու շարականներուն՝ Լուսաւորչի եւ Թողանց կանոններուն հետ։

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՆԵՐՍԷՍԻ

ԿԱՆՈՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ, ԹՈՌԱՆՑ, ՇԱՐԱԿԱՆ ՍԱՀԱԿԻ

- | | |
|--|--|
| 1. Որ ընտրեցար յԱստուծոյ հովիւ բանաւոր հօտի (1) | 1. Բանաւոր հօտին Քրիստոսի ընտրեալ հովիւ քաջ (թու. մկ. 2) |
| 2. Որ յարմատոց բոխեալ բարեաց (2) | 2. Որ յարմատոց Հարցն սրբոց (ՍՀ. 1) |
| 3. Լուսաւորեցեր իմաստութեամբ զեկեղեցիս Հայաստանեայց ըստ սըրբոյ հօր Լուսաւորչին (2) | 3. Որ վերստին զարդարեցեր զեկեղեցիս Հայաստանեայց (թու. Հ. 2), ի ձեռն սուրբ Լուսաւորչին (Գր. Հ. 6) |
| 4. Յանդիմանելով զթագաւորն (3) | 4. Յանդիմանելով զընտրութիւն թագաւորաց (թու. Հ. 3) |
| | 5. Յանդիմանելով զթագաւորն (թու. մկ. 3) |
| 5. Ի վերայ պատուիրանաց զբաժակ մահու արբեալ (3) | 5. Ի վերայ աստուածային օրինաց նահատակեցան (թու. Հ. 3) |
| 6. Տէր սուրբ Ներսէս (1, 2, 3) | 6. Տէր սուրբ Յուսէփ (թու. մկ. 3) |

ՇԱՐԱԿԱՆ Ս. ՍԱՀԱԿԱՑ

ԿԱՆՈՆ ԼՈՒՍԱՒՈՐՉԻ, ԹՈՌԱՆՑ, ՇԱՐԱԿԱՆ ՆԵՐՍԷՍԻ

- | | |
|--|--|
| 1. Որ յարմատոց Հարցն սրբոց (1) | 1. Աստուածային Հաւատոյ Հարցն սրբոց (թու. մկ. 1) |
| 2. Ձիսահակ սուրբ Հայրապետն (1) | 2. ՁԳրիգորիոս սուրբ Հայրապետն (Գր. մկ. 1) |
| 3. Որ զխաւարն անդիտութեան Հայաստանեայց լուծեր, զիմաստութեան ծաղեալ զլոյս սովաւ որդւոց թորգոմայ (2) | 3. Որ զխաւարն անդիտութեան Հիւսիսականաց Հալածեցեր (Գր. Հ. 3) Լուսաւորեալք իմաստութեամբ (Գր. Հ. 6) Որդւոց Թորգոմայ (Գր. տ. 2) Որ զլոյս աստուածային քո զիտութեան Հիւսիսական աղանց ծաղեցեր (թու. Հ. 1) |
| 4. Յիշատակի սորա ընկալ (Տէր) զտօնողացս աղաչանս (3) | 4. Տօնելով զիշատակ սուրբ Հայրապետաց... օրհնեցէք զՀայրն (թու. տ. 1) |

Այսօր անհա բաւարար կը համարինք ճշտելու համար Ս. Ներսէսի եւ Ս. Սահակի շարականներու հեղինակը, յանձին Ս. Ներսէս Ծնորհալիի, որ չգոհանալով պատուել Ս. Գրիգոր Լուսաւորիչը եւ անոր որդիներն ու թոռները, ուզած է ցոյց տալ իր համակրանքն ու սէրը իրեն հոմանուն սուրբին եւ պաշտպանին, ինչպէս նաեւ Հայոց մեծ հայրապետ Ս. Սահակին: Դիտելի է որ Աւետիքեան իր Բացատրութիւն շարականաց-ին մէջ զանց ըրած է խօսիլ Ս. Սահակի շարականին մասին, իսկ Ս. Ներսէսի շարականը, որովհետեւ կը ներկայանայ իր ամբողջ կանոնով, զանազանութիւն չի դնէր հեղինակներու, այլ միահամուռ կ'ընծայէ միեւնոյն գրիչին, Յովհաննէս Երզնկացիի¹⁸:

ԿԱՆՈՆ ՍՐԲՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԱՑՆ

Թէեւ Կիրակոս Գանձակեցի կը լռէ նկատմամբ Հայրապետաց կանոնի հեղինակին, սակայն Սարգիս Երէց բացայայտ կերպով Ն. Երնորհալիի կ'ընծայէ այս կանոնն ալ: Հ. Գ. Աւետիքեան «ասեմ արարեալ Մովսիսի խորենացւոյ, ի յիշատակի երից տիեզերական ժողովոց, որք եղեալ էին մինչեւ ի ժամանակ խորենացւոյ... Բայց օրինակ ինչ Ներսիսի Ծնորհալւոյ ընծայէ զայս շարական»¹⁹: Հայրապետաց կանոնը ունի հետեւեալ պատկերը.

- օ. Այսօր սրբոց հայրապետացն.
- Ժողովեալ սուրբ հայրապետքն.
- հ. Որ էիւր յառաջ քան դաւիթեանս.
- ո. Աստուածային ճառագայթ որ ի Հօրէ
- տ. Հանգիստացեալ ընդ երկնայնոցն.
- մկ. Ով հրաշալի նախահարք միշտ:

Ձեռագիրներու համեմատութենէն որոշ կը տեսնուի որ օրուան պատկերը եւ Մանկունքի հեղինակները չեն կրնար նոյն անձը ըլլալ, որով ապացոյցներէն մէկն է նաեւ շարականներու միջեւ եղած լեզուական եւ բառական տարբերութիւնները: Ծարականներու հին խմբագրութեան մէջ (Ձեռ. թիւ 97) դեռ գոյութիւն չունի հայրապետաց «կանոն»ը, այլ միայն «Ով հրաշալի» Մանկունքը: 1287ի Ս. Ղազարի տօնացոյցը սուրբ հայրերու իւրաքանչիւր տօնին կը յանձնարարէ «հց. ԴՁ. Հայրապետացն. Սքանչելագործ». նոյնը կը կրկնէ նաեւ Եփեսոսի սուրբ ժողովի տօնին «Եր. Եփեսոսի. Հց. հայրապետացն ասա», նշան է թէ տօնացոյցը գործածուած չըլանին դեռ անծանօթ էր հայրապետաց յատուկ կանոն մը: Ասոր քով, նոյն տօնացոյցը կը ճանչնայ ԳՁ. «Ով հրաշալի նախահարք» շարականը, եւ Եփեսոսի

18. Հ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ, անդ, էջ 433:

19. Հ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ, անդ, էջ 568:

Ժողովի տօնին կը յանձնարարէ երգել զայն: Սարգիս Երէցի շարակներ, որ ունի ամբողջ կանոնը, ընդօրինակած է բաց գրութեամբ, բացի Մանկունք «Ով հրաշալի»էն, որով կրճատ ձեւը կը մատնանչէ անոր հնութիւնը, կամ լաւ եւս հեղինակի տարբերութիւնը եւ հնութիւնը, որովհետեւ անկարելի է որ նոյն հեղինակին գործը յայտնուի այլազան ձեւերով:

Հետաքրքրական է տեսնել Երեւանի 1193 թուականի ծանօթ շարակնոցի բերած նորութիւնը, ուր բովանդակ կանոնը կը ներկայանայ կրճատ գրութեամբ, եւ որով տարակոյս մը կ'արթնցնէ թէ մի' դուցէ հին ըլլայ անոր գոյութիւնը: Սարգիս Երէցի եւ 1193ի շարակնոցի ցոյց տուած նշանները անհաշտ են իրարու. Սարգիս Երէց կը դրէ. «Եր. Կոստանդնուպոլսոյ սուրբ ժողովոյն ՃԾ. հայրապետացն, Օրհնութիւն, Հարցն եւ զամէն զնորն ասա, եւ թէ ոչ՝ Ակ. Սուրբ Աստուած արարիչ»: Նոր կը կոչէ հայրապետաց կանոնը, եւ անոր համաձայն ալ բաց կ'օրինակէ ամբողջ կանոնը, բացի Մանկունքէն, որով ակնարկեցինք քիչ առաջ: Եթէ նոր է կանոնը, ի՞նչպէս մեկնել 1193ի կրճատ գրութիւնը:

Պէտք է իբր եղական երեւոյթ մը համարինք 1193 թուականի շարակնոցի եղելութիւնը: Դիտելի է կանոնին դրաւած տեղը ձեռագրին մէջ, այսինքն բոլորովին եղական տեղ մը, սուրբերու «շարական»-ներուն վերջաւորութեան, ուր յանկարծակի «կանոն»ի մը յայտնութիւնը՝ ցոյց կու տայ անոր անբնական տեղ մը գրաւելը, անոր նորութիւն ըլլալը. իսկ եթէ հինէն ի վեր գոյութիւն ունէր ամբողջ ըրութիւն ըլլալը. իսկ եթէ հինէն ի վեր գոյութիւն ունէր ամբողջ ըրութիւն ըլլալը, պէտք էր գրաւել սուրբերու «կանոն»ներու շարքին, եւ «կանոն»ը, պէտք էր գրաւել սուրբերու Մանկունքներու մէջ: ոչ թէ իբր յաւելուած մը յանկարծ յայտնուէր Մանկունքներու մէջ: Արդ այս ալ ապացոյց մը կրնայ ըլլալ անոր «նոր» ըլլալուն, հակա-նակ որ կը յայտնուի կրճատ գրութեամբ, որովհետեւ եթէ իրապէս ունի որ կը յայտնուի կրճատ գրութեամբ, անաւ թիւ 97 շարակ-«հին» կանոն մը ըլլար, պէտք էր անծանօթ մնալ թիւ 97 շարակ-նոցին, ու 1287ի տօնացոյցն ալ պէտք պիտի չգտար հայրապետաց տօնին նշել տարբեր Հարց մը քան օրուան պատկերը: Եւ որովհետեւ տօնացոյցներն ալ կը չեղտեն թէ «զհայրապետացն... Տէր Ներշարականացոյցերն ալ կը չեղտեն թէ «զհայրապետացն... Տէր Ներսէս կաթողիկոս Կլայեցին ասաց», ուստի կ'ուզենք հաստատել թէ սէս կաթողիկոս Կլայեցին ասաց», ուստի կ'ուզենք հաստատել թէ սէս իրապէս Հայրապետաց կանոնը, բացի Մանկունքէն, գրուած է Երնորհալիէ:

Ամբողջ կանոնը ուղղուած է առաջին երեք տիեզերական ժողովի մասնակցող հայրապետներուն, եւ որով շարականներու իմաստն ալ դաւանաբանական բնոյթ մը ունին, «հաստատեցին զհիմունս հաստոյ», «զբանն ի սկզբանէ քարոզեցին... յառաջ քան դաւիթեանս լատոյ», «զբանն ի սկզբանէ քարոզեցին... յառաջ քան դաւիթեանս լատոյ», «զբանն ի սկզբանէ քարոզեցին... յառաջ քան դաւիթեանս լատոյ» ի Հօրէ ծնունդ անճառ», եւն. որով նիւթին պահանջը թոյլ չի տար որ կանոնն լիովին կերպով համեմատուի Ծնորհալիի գրած միւս կանոններուն հետ, աւելի եւս հաստատուելու համար թէ Ծնորհալին է

ռացութեան կը մատնուի հինը եւ չ'օրինակուիր ձեռագիրներուն մէջ, այնպէս որ Ամատունի հրատարակած է զայն իբր պարականոն շարական²⁰ :

ՍՈՒՐԲԵՐՈՒ ԾԱՐԱԿԱՆՆԵՐ

Թէ՛ Կիրակոս Գանձակեցի եւ թէ՛ միւս շարականացոյցները համաձայն են որ Շնորհալի գրած ըլլայ «եւ այլ բազում շարականս», «եւ Մանկտիք բազում շարակներ», առանց նշանակելու թէ որոնք են այդ շարականները: Հ. Գ. Աւետիքեան կը կատարէ որոշ բաժանում մը դրելով. «ըստ առաւելագոյն մասին ասէն արարեալ Պետրոսի Գետադարձի...: Բայց օրինակ ինչ ընծայէ Շնորհալու Ներսիսի ըղ-Մանկունքն Ոսկեբերանի, Բարսղի, Եփրեմի, Գրիգորի Աստուածաբանի, Եւստատիոսեանց, Երկուց Բիւրուց, Ոսկեանց եւ Ատովմեանց»²¹: Տեսնենք ձեռագիրներու բերած նորութիւնը, որոնք կըր-նան օգնել մեզի նոր անդրադարձութիւններ կատարելու:

Ձեռագիր շարակնոցներու մէջ սուրբերու (Մանկունք) շարականները կը գտնուին ձեռագրին վերջաւորութեան, որոնց կը յաջորդեն Մարտիրոսաց կանոնները (ԱԶ-ԴԿ) եւ Յարութեան Աւագ Օրհնութիւնները: Ահա սուրբերու շարականներուն կարգը, նախ Ս. Ղազարի թիւ 97ի եւ երկրորդ Երեւանի 1193ի շարակնոցի մէջ.

Ձեռ. Ս. ՂԱԶԱՐԻ, ԹԻԻ 97	Ձեռ. ԵՐԵՎԱՆԻ, ԹԻԻ 9838 (գր. 1193)
Շրկ. Սուքիասանց. Ստուգութեամբ.	Շրկ. Սուքիասանց. Ստուգութեամբ.
Շրկ. Վահանայ Գոզքմացուն. Զարմա-նալի.	Շրկ. Վահանայ Գոզքմացուն. Զարմա-նալի.
Շրկ. Ղեւոնդեանց. Պայծառացան այսօր. Երգեմք ձեզ.	Շրկ. Ղեւոնդեանց. Պայծառացան այսօր. Երգեմք ձեզ.
Շրկ. Դաւթի Դումեցուն. Լցեալ աս-տուածային.	Շրկ. Դաւթի Դումեցուն. Լցեալ.
Շրկ. Կիրակոսի. Յարմատոց բարեաց.	Շրկ. Կիրակոսի. Յարմատոց բարեաց.
	Շրկ. Եւստատիոսեանց. Որ զհուր.
	Շրկ. Երկուց Բիւրուց. Այսօր ընդ.
	Շրկ. Իգնատիոսի. Որ հրաւիրեցեր.
Շրկ. Բարսղի. Լուսապայծառ.	Շրկ. Բարսղի. Լուսապայծառ.
	Շրկ. Գրիգորի. Որ լուսով.
	Շրկ. Յով. Ոսկեբերանի. Որ յանկիգրն.
	Շրկ. Թէոդորոսի. Որ ընտրեցեր.
Շրկ. Ոսկեանց. Որք արժանաւորեցայք.	Շրկ. Ոսկեանց. Որք արժանաւորեցայք.
Շրկ. Ատովմանց. Աղաչեմք զքեզ.	Շրկ. Ատովմանց. Աղաչեմք զքեզ.
Շրկ. Վարդանանց. Արիացեալք.	Շրկ. Վարդանանց. Արիացեալք. Նորա-հրաշ.

20. ՍԱՀԱԿ ՎՐԴ. ԱՄԱՏՈՒՆԻ, անդ, էջ 88-89:

21. Հ. Գ. ԱԻՆՏԻՔԵԱՆ, անդ, էջ 576:

Երկու սիւներու համեմատութենէն կը տեսնուի թէ 1193ի ձեռագիրը հետեւած է թիւ 97ի կարգին, ընդօրինակելով զանոնք կրճատ ձեւով, իբր հին ու ծանօթ շարականներ, միջանկեալ աւելցնելով եւ թը շարականներ, բաց դրութեամբ, իբր նշան անոնց նոր ըլլալուն: Եւ որովհետեւ այս նոր կոչուած շարականներուն մէջ կը փայլի Վարդանանց Նորահրաշը, կարծէք ստիպուած ենք եզրակացնել թիւ 97ի շարականներուն Շնորհալիէ առաջ գոյութիւնը, միաժամանակ հաստատելով նոր օրինակուած շարականներու հեղինակը՝ Շնորհալին Ներսէս:

Ոչ թէ միայն ձեռագիրներու քննութենէն, այլ նաեւ անոնց ներքին իրարու հետ ունեցած կապակցութենէն կարելի է հաստատել մեր քննադրութիւնը իբր շարական եղելութիւն մը: Եւ իրապէս համեմա-տելով նոր շարականները թէ՛ իրարու հետ եւ թէ՛ այն կանոններուն հետ որոնք անտարակոյս Շնորհալիին են, կ'ունենանք հետեւեալը.

ԾԱՐԱԿԱՆ ԵՒ ՍՏՈՒՍՏԻՈՍԵԱՆՑ

Որ զհուր սիրոյ քո Քրիստոս բորբոքեցեր յողիս արդարոց.

Հուր սիրոյ կենարարին բորբոքեցաւ յողիս սրբոցն (Ղեւոնդեանց, մկ. 5)

Որ զհուր արկեալ յերկիր բորբոքեցեր յողիս (Շրկ. Թէոդորոսի, 3)

Ընծայեաց զանձն ողջակէզ քեզ կամաւոր.

Կամաւոր քեզ պատարագ զանձինս ընծայեցին (Շրկ. Երկուց Բիւրուց, 3)

Մատոյց զանձն ողջակէզ քեզ պատարագ ընդունելի (Շրկ. Թէոդորոսի, 3)

Զբաժակն արեան արեալ... ընդ քեզ մկրտելով.

Մկրտեալք արեամբն իւրեանց արբին զբաժակ մահու փրկչին (Ղեւոնդ. մկ. 6)

Արեամբ մկրտելով ընդ քեզ (Ղեւոնդ. Հց. 3)

Ըմպեալ զբաժակ եւ մկրտեալ արեամբ իւրով (Նորահրաշ 3)

Զբաժակ մահու արեալ (Շրկ. Ներսիսի, մկ. 3)

Զինեալ ընդդէմ մահու.

Վառեցար զինու... ընդդէմ մահու (Նորահրաշ 1)

ԾԱՐԱԿԱՆ ԵՐԿՈՒՑ ԲԻՒՐՈՒՑՆ

Ընդ անմարմնոց դասակցեալ պարէ.

Յերկինս պարակցեալ ընդ անմարմնոցն (Նորահրաշ 5)

Բանաւոր ողջակիզաց... ի վերայ... բորբոքեալ բոցոյն.

Կամաւոր քեզ պատարագ զանձինս ընծայեցին ի վերայ սրբութեան սեղանոյ եւ ընկալան զպսակս անապականս.

Ողջակիզեալ մատուցանէր զինքն նուէր, բանաւոր պատարագաւ ընծայելով (Նորահրաշ 7)

Զի ընկալցին ի քէն Քրիստոս զանապական փառաց պսակն (Ղեւոնդ. մկ. 2)

Ընծայեաց զանձն ողջակէզ քեզ կամաւոր (Շրկ. Եւստ. 1)

Ընծայեաց զանձն ողջակէզ քեզ պատարագ ընդունելի (Շրկ. Թէոդորոսի 3)

չան թէ դեռ նոր մտած են շարականոցէն ներս, ուրիշ շատ մը անվի-
ճելիօրէն Շնորհալիի պատկանող շարականներուն հետ միասին:

Դիտելի է որ Վարդավառի եօթեայ տօնակատարութիւնը շատ
դանդաղ եւ անկանոն կերպով թափանցած է Հայ Եկեղեցիէն ներս:
Այս նիւթին մասին աւելի երկար խօսելու առիթ պիտի ունենանք,
երբ անդրադառնալու ըլլանք Վերափոխման եօթեայ տօնակատարու-
թեան եւ շարականներուն մասին, համեմատելով երկու տօներու շա-
րականներն ու ճաշոցի ընթերցուածները իրարու:

ԿԱՆՈՆ ՊԵՆՏԵԿՈՍՏԷՒ

Ներկայիս Հայաստանեայց Եկեղեցին Պենտեկոստէի տօնին հա-
մար ունի շարականի եօթը կանոններ, որոնցմէ առաջինը հին է ու
կ'ընծայուի Մովսէս Խորենացիի եւ կամ Յովհան Մանդակունիի: Ընդ-
հանրապէս վիճուած է յաջորդ վեց օրերու կանոններու հեղինակին
մասին: Սարգիս Երէց շարականներու հեղինակներու մասին խօսած
ատեն Շնորհալիի անունին տակ կը թուարկէ զանոնք ըսելով «եւ ըզ-
Հոգւոյն սրբոյ դալստեան վեց աւուրն»: Գրիգոր Տաթեւացի կը սահ-
մանափակէ անոնց չափը «զՀոգւոյն դալստեան Դ. պատկերն» ըսե-
լով: Ստեփանոս Զիք Զուղայեցի ոտանաւոր ձեւով դրած շարական-
ներու հեղինակին մէջ կ'ըսէ. «ոգեալ Ներսէսըն Կլայեցի... Ըզվեց
պատկեր Պենտակոստին»: Յակոբ Սսեցի տարտամ բացատրութեամբ
մը կ'անցնի. «Եւ նոյն նըման Պենդեկոստին, երեք եւ չորս, հինգ շա-
բաթին»: ԺԸ-ԺԹ. դարու անանուն խմբագրութեան մը մէջ դարձեալ
կը կրկնուի թէ «Սուրբն Ներսէս Շնորհալին... զՀոգւոյն դալստեան
չորս պատկերն» դրած է²²:

Իրարու անհամաձայն են ուրեմն դրաւոր աղբիւրները, ոմանք
չորս եւ ոմանք վեց օրերու կանոնները կը վերագրեն Շնորհալիի:
Զարմանալի է նաեւ որ Շնորհալիէ դար մը ետք, Վանական վարդա-
պետ ինքն իրեն կը հարցնէ ու կը պատասխանէ. «Հոգւոյն դալստեան
ութօրէքն ընդէ՞ր ոչ առնեմք որպէս այլազգիքն...», ընթերցուածն
մին աւուր է կաթգած, Աստուածաբան մի ճառ է ասացեալ, զի մի
օր է տօնն, մին աւուր է շարականն²³: Յիշենք նաեւ թէ Կիրակոս
Գանձակեցի Հոգեգալստեան յաջորդող վեց օրերու շարականներու
մասին ամենեւին խօսք չունի եւ լռութեամբ կ'անցնի:

Ներկայ Ժամանակներու նրբատես եւ շարականագէտ Աւետիքեան,
Հոգեգալստեան երկրորդ օրուան շարականները մեկնելէ առաջ կը
ծանուցանէ. «Զկանոն երկրորդ աւուրն Ներսիսի Շնորհալւոյ արար-

22. Յ. ԱՆԱՍԵԱՆ, անդ, էջ LXVI-LXVII:
23. Զեռ. Ս. Ղազարի, Թիւ 1244, էջ 535-6:

եալ՝ Վկայէ ոչ միայն աւանդութիւն աղբիւրն, այլ եւ ընտանի ոճ կազ-
մութեանն, որոյ եւ անունն արձանացուցեալ կայ ի վեց տուն Օրհ-
նութեանն. նորա համարին եւ կանոնք երրորդ, չորրորդ եւ հինգե-
րորդ աւուրցն²⁴: Վեցերորդ օրուան շարականներու մասին խօսելէ
առաջ, նոյն Աւետիքեանը կը յայտնէ տարակոյսը «զայս կանոն եւ
վաջորդն ոչ համարին Շնորհալւոյն Ներսիսի, իսկ թէ ո՛ր այլ ոք իցէ
յօրինեալ, օրինակ ինչ դնէ Ներսիսի Լամբրօնացւոյն»²⁵: Այլիւս ալ,
որ սովորաբար անվերապահ եւ շոյալօրէն շարականներ կը շնորհէ
Շնորհալիի, Պենտեկոստէի տօնի շարականներուն համար վերապա-
հութեամբ մը կ'արտայայտուի «Հոգեգալստեան Բ. օրուան կանոնն,
թերեւս հետեւեալ օրերուն կարգն ալ»²⁶:

Անցնելով ձեռագիրներու, հետաքրքրական երեւոյթի մը կը հան-
դիպինք: Ներկայիս որեւէ ձեռագիր շարականոց, նոր կամ հին խմբա-
դրութեամբ, Վերափոխման տօնին համար ունի միշտ երեք օրուան
կանոն, եւ ինչպէս քիչ ետք պիտի տեսնենք, Վերափոխման Երկրորդ
եւ Երրորդ օրերու կանոնները վերագրուած են Շնորհալիի: Զեռա-
կական նոյն երեւոյթը չի յայտնուի Հոգեգալստեան Բ-ի օրերու
կանոններուն համար. ունինք հին խմբագրութեան ձեռագիրներու
բաղմութիւն մը, որոնք Վերափոխման երեք պատկերներ ունենալով
հանդերձ, Հոգեգալստեան համար ունին առաջին օրուան կանոնը.
այսպէս

	ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ	ՎԵՐԱՓՈԽՄԱՆ
Զեռ. Ս. Ղազարի, Բ. 97, 925	Ա օրուան կանոն	Ա, Բ, Գ օրուան կանոններ
Զեռ. Երեւամի, Բ. 9838	»	»
Զեռ. Երուսաղէմի, Բ. 1556, 1654	»	»
Զեռ. Ս. Ղազարի, Բ. 751	Ա-Ե օրուան կանոններ	»

Այս ամէնը ցոյց կու տայ թէ ինչպէս շատ մը շարականոցներու մէջ
երկար ատեն մնացած է հին աւանդութիւնը, Հոգեգալստեան միօր-
եայ տօնակատարութիւնը, որով զարմանալի պէտք չէ թուի Վանա-
կան վարդապետի հարցումը թէ «Հոգւոյն դալստեան ութօրէքն ըն-
կան վարդապետի հարցումը թէ «Հոգւոյն դալստեան ութօրէքն ըն-
դէ՞ր ոչ առնեմք... մին աւուր է շարականն». 1327ի ճաշոց մը դեռ
Պենտեկոստէի համար ունի մէկ օրուան ընթերցուած:

Դեռ աւելի մանրամասնելով, կրնանք ըսել թէ ԺԳ. դարէն հա-
սած խմբագրուած շարականոցները, առանց բացառութեան, Հոգեգա-
լստեան եօթը օրերու կանոնները ունին իրարմէ անբաժան իբր մէկ

24. Հ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ, անդ, էջ 380:
25. Հ. Գ. ԱԻԵՏԻՔԵԱՆ, անդ, էջ 390:

26. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, անդ, էջ 446:
27. Զեռ. Ս. Ղազարի, Թիւ 921:

